

ԳԵՊԻ ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄԵԱԿ - 1

**ՄԿՐՏԻՉ ՄԱԼԽԱՍԵԱՆ**

**ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԻ  
ԱՌԱԶԱՐԿՆԵՐ**

- Ա -

**ԿՐԹՈՒԹԻՒՆ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ  
ՄՈՆՈՐԷԱԼ  
1999

## ԱՅՍ ԳԻՐՔԸ

Մկրտիչ Մալխասեանի «Կրթութիւն»ը, առաջինը՝ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ շարքին, անկիւնաքար մըն է, որուն վրայ հեղինակը նպատակադրած է յաջորդական հրատարակութիւններով քար առ քար բարձրացնել հայութեան շէնքը քսանմէկերորդ դարու սեմին:

Մեր ժողովուրդը կարիքը ունի վերակերտուելու՝ կազմ ու պատրաստ դիմաւորելու և յաղթահարելու համար քսանմէկերորդ և յաջորդ դարերու մարտահրաւերները, որպէսզի ազգերու համաշխարհային ընտանիքին մէջ ապրի արժանապատի ու բարօր կեանք՝ իբրև հաւասարը ամենաբարգաւաճ ազգերու:

Այս գիրքը արդիւնքն է 1985–1987 թուականներուն կատարուած մանրակրկիտ և լայնահուն ուսումնասիրութեան մը:

Թէև այդ թուականէն ասդին հայաշխարհի մէջ կատարուած են հիմնական փոփոխութիւններ՝ Հայաստանի անկախացումով և արևելակրոպական ու նախկին խորհրդային երկիրներու հայութեան առջև բացուող նոր հեռանկարներով, հետազօտութիւնը էականին մէջ կը պահպանէ իր այժմէականութիւնը թէ՛ իբրև տուեալ, թէ՛ իբրև ախտաճանաչում և թէ՛ իբրև եզրայանգում:

Գիրքով յստաշարուած գաղափարներուն հիմնախարիսխը կազմած է հեղինակին այն հաւատամքը՝ թէ երկրի մը կրթութիւնն ու կրթական կեանքը հակակշռողը իր հակակշռին տակ կ'ունենայ այդ երկրին ներկան և մա՛նաւանդ ապագան:

Փոխարինե՛նք երկիր բառը ազգով կամ ժողովուրդով՝ վերբերած կ'ըլլանք արդէն խորունկ տազնապ–ձգտումը հեղինակին–մոայլ ապագայի մը կանխարգիլումը՝ հակակշռի տակ առնելով մեր ժողովուրդին ներկան, անոր ապահովելու համար ամրանիստ խարիսխով ապագայ մը:

Բազմաշերտ է այդ տազնապը: Աշխարհ բռնուած է հաղորդակցական միջոցներու արագընթաց զարգացման մը հնքէն, որ բոլոր՝ ժողովուրդներու, մա՛նաւանդ փոքրերու, իբրև ուրոյն ազգ գոյատևութեան և կենսագործունէութեան խնդիրները կը դնէ նոր լուսարձակներու տակ:

Երբ կայ գոյութեան մը սպառնացող վտանգ, և եթէ կայ գոյութիւնը պահպանելու գիտակցութիւն ու կա՛մք, անհրաժեշտ է

որ գտնուի համապատասխան զրահանդերձ: Հո՛ւ է որ Մալխասեան կը գործածէ բանալի՝ բառը– **ԱՌՍ.ՔԵԼՈՒԹԻՒՆ:**

Երկիր կոչուող այս մոլորակին վրայ Հայկի սերունդ մեր ժողովուրդը իբրև Մաշտոցի զարմ իր գոյատևութիւնն ու գոյազարգացումը ապահովելու համար յաջորդող հազարամեակներուն՝ հրաւիրուած է սահմանելու **համազգային առաքելութիւն մը**, որ կ'ենթադրէ **համազգային կրթական փիլիսոփայութեան մը բիրեղացումը** և անոր վրայ խարսխելի **համազգային կրթական դրութեան մը որդեգրումը:**

Այսքան պարզ, և, միաժամանակ, ա՛յսքան բարդ: Բա՛րդ, որովհետև հայկականութեան տևականութիւնը ապահովելու կոչուելիք այդ առաքելութիւնը,– որուն բաղադրատարերէն մին հայութեան Մե՛ծ Երազը իրականացնելու ձգտումն է,– «գիտութեան ու մշակոյթին, փորձառականին ու իմացականին, ազգայինին ու միջազգայինին երջանիկ միաձուլում»ով է նախապայմանաւորուած:

Այս հետազոտութեամբ ուրուագծուող արմենականութիւնը, հետևաբար, կը ներկայանայ իբրև ազգային գաղափարախօսութիւն մը, որ կը փորձէ առողջ հիմերու վրայ ճշդել մեր տեղն ու դերը ազգերու և քաղաքակրթութիւններու համաշխարհային ընտանիքին մէջ՝ առանց անոնցմէ որևէ մէկը ստորադասելու կամ գերադասելու միսին, ինչպէս նաև առանց զանոնք հակադրելու իրարու: Այսպիսի նախապայմանով ազգային կրթական համակարգ մը թումբ կանգնելով ապազգայնացնող ուժացուցիչ տարրերու դէմ, միաժամանակ պատուար կը բարձրացնէ վատառողջ ազգայնամոլութեան դէմ, որուն չարիքներուն ականատես դառնալու բազմաթիւ առիթներ ունեցած է մարդկութիւնը քսաներորդ դարու ընթացքին:

Արմենականութիւնը հայուն կը բերէ իր ազգային **արդար հպարտութիւնը՝** անոր աչքերը ուղղելով **նոր նուաճումներու հորիզոնին:**

**Դոկտ. Վաչէ Ղազարեան**

## I- ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### Ա.- ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

ԿՐԹՈՒԹԻՒՆը, առնուած իբրև ամբողջական արտաշայտութիւն՝ բաղկացած է երեք հիմնական մասերէ.-

ա.- Ուսում

բ.- Չարգացում

գ.- Դաստիարակութիւն

ՈՒՍՈՒՄԸ, առաւելաբար, ծանօթութիւններու, տեղեկութիւններու ստացումն է, անոնց մէկտեղումը՝ տրամաբանական շարքով մը:

ՋԱՐԳԱՑՈՒՄԸ՝ Ուսումի միջոցով, և որոշ մեթոտներու և մօտեցումներու կիրարկումով մէկտեղուած ծանօթութիւններէն և տեղեկութիւններէն ստացուող այն իմացական յատկանիշն է, որ կարելի կը դարձնէ համադրումը այդ ծանօթութիւններուն ու տեղեկութիւններուն, ինչպէս և գործածումը անոնց՝ հասնելու համար բանական եզրակացութիւններու:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ՝ Չարգացումէն բխող ընկերային բարոյական, մարդկային յատկանիշներու կազմումն է:

### Բ.- ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այն **Ուսումը**, որ ստեղծական կուտակումն է տեղեկութիւններու և ծանօթութիւններու՝ Չարգացումի չ'առաջնորդեր, և այն **Չարգացումը**, որ չ'է առընչուած էական ձգտումներու, չ'առաջնորդեր դէպի **Դաստիարակութիւն**:

Դժբախտաբար, շատեր Ուսումը կը շփոթեն Չարգացումին հետ, և Չարգացումը՝ Դաստիարակութեան. մինչ իրողութիւնն այն է որ՝ կան ուսեա՛լ անձեր, որոնք զարգացած չե՛ն, և զարգացա՛ծ անձեր, որոնք Դաստիարակութիւն չունին:

Ուսումը, Չարգացումը և Դաստիարակութիւնը ԱՐԴԻԻՆՔՆԵՐ են, որոնք կը ստացուին որոշ դասանիւթերէ, որոշ մանկավարժական մեթոտներէ, ինչպէս նաև փիլիսոփայական և գիտա-ընկերային որոշ մօտեցումներէ: Իսկ կրթութիւնը պսակումն է անոնց, երջանիկ միաձուլումը:

ՈՒՍՈՒՄը կը բնորոշէ առաւելաբար այն դասերը, որոնք կ'առաջնորդեն մասնագիտացումի:

ԶԱՐԳԱՑՈՒՄը կ'ընդգրկէ՝ ա.- Այլ դասեր ալ, որոնք ծանօթ են «Ընդհանուր Զարգացումի Դասեր» անունով, բ.- Դասաւանդումի որոշ մեթոտներ:

Զարգացումը մասնագիտականէն տարբեր ծանօթութիւններու ամբարումը չէ պարզապէս. Միտքի՛ն մարզումն է ան՛:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆը մարզումն է ենթակային հոգիին, զգացումներուն ու մտածելակերպին՝ հաւասարապէս անհատական, մարդկային, ազգային ու գաղափարաբանական մարզերուն մէջ: Այս առընչութեամբ է որ առաջնակարգ կարևորութիւն ունին ՈՒՍՈՒՑԻՉը, ԴՊՐՈՑը և ԸՆՏԱՆԻՔը:

Քսաներորդ դարուն յատկապէս, կրթական տեսակէտէն՝ Դպրոցին և Ընտանիքին չափ, ու թերևս ատէլի, ազդեցիկ են՝ ա.- **Հանրային Հաղորդակցութեան և Լրատուութեան միջոցները** (հեռատեսիլ, մամուլ, ձայնասփիւռ, ցուցանակ, շարժանկար, ձայներիզ, պատկերիզ, բեմ, ևայլն), բ.- **Կազմակերպութիւնները** (եկեղեցի, գործի ընկերութիւններ, ընկերային-մշակութային խըմբակցութիւններ), գ.- **Պետութիւնը:**

Արդ, Կրթութիւնը նախ և առաջ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ է, և հետևողական ՀԵՏԱՊՆԴՈՒՄ՝ կիրարկելու այդ կազմակերպումին առաջադրանքները: Այս կապակցութեամբ առաջնակարգ նշանակութիւն ունի ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐը:

Հիմա քննենք Կրթական Ծրագիրը:

## II- ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (Educational Program)


### Ա.- ՄՈՒՏՔ

Կրթական Ծրագիրը կ'ընդգրկէ.-

ա.- Ուսումնական Ծրագիրը.

բ.- Զարգացումի Ծրագիրը.

գ.- Դաստիարակչական Ծրագիրը:




### ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.-

Ընթերցողէն կը խնդրուի ի մտի ունենալ վերոյիշեալ տարագրութիւն տրուած մասնաշաղկապները՝ առաջքը առնելու համար շփոթութիւններու:

Դաստիարակութեան Ծրագիրը կոչած ենք "Social Education Program". հասանաբար կարելի ըլլայ աւելի արտայայտիչ բացատրութիւն մը գտնել:

Տրուած ըլլալով որ Ուսումը, Զարգացումը, և Դաստիարակութիւնը հետզհետէ աւելի ընդլայնող, և մէկը միւսէն աւելի համապարփակ հասկացողութիւններ կը ներկայացնեն՝ կարելի է ընդհանուր պատկերը տալ հետևեալ տախտակով.-



**Կրթական Ծրագիրը** ունի չորս գլխաւոր մակարդակ.-

ա.- Մանկամտոր-մանկապարտէզ

բ.- Նախակրթարան

գ.- Երկրորդական

դ.- Բարձրագոյն

Սկսի՛նք գագաթէն, ու քննենք ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒԹԻՒՆը,- քոլէժ ու համալսարան,- տրուած ըլլալով որ այս գլուխին գլխաւոր առաջադրանքներէն մէկն է Հայագիտական Ամպիոնի մը հիմնումը: Միւս մակարդակներուն մասին պիտի արտայայտուինք հետթով: